

ՄՐՈՒԽԵՍԻ ԷՉԵՐ



**Ցունաստանը ոգեւար
Միսոլոնկիի աւերակներուն վրայ (Պորտոյի թանգարան**

Ցոյներուն ոգորումը Տաճկին լուծէն ազատելու համար՝ խանդավառեց։ ԺԹ գարու առաջին կէսին մէջ, Յերպատի բոլոր այնիւ մտցերը, Պայրըններն ու Հիւ կօները իրենց քրնարին ամենէն կզօր հնչիւնները նույիրեցին յանական դատին։ Տըլաքրուա, Հիւկոյի եղբայրը նկարչութեան մէջ, իր ներկապանակն ի սպաս զրաւ անոր, և արտողրից մէկ քանի գրւ-լուի-գործոցներ, որոնց մինչ Քիոսիկուտարածը՝ կուվիրի թանգարանը կը գտնուի։ Այս պատկերը, որուն վերասարութիւնը կը հրատարակենք, կըներկայացնէ Ցունաստանը, աւերակներու մէջ, մահամերձ, օգնութիւն հայցող թիւերը բացած, բայց միշտ գեղեցիկ ու խրոխտ, իր եսեւն ունենալով Տաճկին մասյլ ու չարագուշակ ուրուականը՝ սպառնականօրէն ցցուան։